

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2024 թվականի մարտի 29-ին ժամը 15:00-ին ք. Երևան Կոդյունի 2 հասցեում «Երևանի Մխիթար հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վարչական մասնաճյուղի դահլիճում տեղի կունենա «Երևանի Մխիթար հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի սեփականության իրավունքով պատկանող ներքոնշյալ շարժական գույքերի (տնակներ, վագոն տնակներ) **բաց դասական եղանակով աճուրդ՝ 5 (հինգ) լոտով**

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2024 թվականի մարտի 28-ը ժամը 16:00-ին

| ԼՈՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ | ԱՆՎԱՆՈՒՄ | ՎԻՃԱԿ | ՏԱՐԵԹԻՎ | ՔԱՆԱԿ | ԳՈՒՑՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ | ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ | ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՅԼԻ ՉԱՓԸ |
|----------------------|--------------------------------|--------|---------|--------------------|-----------------------|-----------------|-----------------------|
| Լոտ 5 | ՏՆԱԿ | Հնամաշ | 2000 | 2 | ք. Դիլիջան | 364,500 ՀՀ դրամ | 10,000 ՀՀ դրամ |
| Լոտ 6 | ՄԵՏԱՂ, ՏՆԱԿ ՎԱԳՈՆ ԱՐՏԱՍԱՀ, 6x3 | Հնամաշ | 2002 | Բաղկացած է 2 մասից | ք. Դիլիջան | 291,600 ՀՀ դրամ | 10,000 ՀՀ դրամ |

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներակայացվի՝

- 1) *Անձ հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ պետական գրամցումը հավաստող փաստաթղթերի պատճենները և աճուրդի մասնակցության հայտը ներկայացնող անձի լիազորությունները հաստատող փաստաթղթերի պատճենները,*
- 2) *Լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի վճարման անդորրագիր:*

Նախավճարը վճարվում է «ԱՄԻՕ բանկ» ՓԲ ընկերությունում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի թիվ 115 001 665 13 800 հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելի ցանկացող անձանց հայտերն ընդունվում են ոչ ուշ քան աճուրդի անցկացմանը նախորդող աշխատանքային օրը ժամը 16:00-ն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի իրավաբանական բաժին:

Աճուրդի ավարտից հետո հաղթող ճանաչված մասնակցի հետո ստորագրվում աճուրդի արդյունքների մասին արձանագրություն: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցն աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել գույքի աճուրդում իր կողմից առաջարկված առավելագույն գինը՝ հաշվանցելով տվյալ լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով վճարված նախավճարի արժեքը: Հիշյալ ժամկետում պայմանագիր չկնքելու, այդ նպատակով Համալսարան չներկայանալու դեպքում վճարված նախավճարի գումարը չի վերադարձվում:

Աճուրդին մասնակցած սակայն հաղթող չճանաչված մասնակիցների կողմից Համալսարանի վերոնշյալ հաշվեհամարին վճարված նախավճարը սահմանված ժամկետում հետ է վերադարձվում մասնակցին:

Հաղթող ճանաչված և պայմանագիր կնքած անձին համապատասխան գույքը կհանձնվի գույքի գտնվելու վայրում: